| | | | |
|---|---|---|---|
| | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ-ԱՌԱՋԱԴՐԱՆՔ-11 | | |
| Հ/Հ | անվանումը/տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | քանակը |
| 1 | 2 | 3 | 4 |
| | 1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԻ ՀԱՆԴԵՐՁԱՐԱՆ | | |
| 1.1 | Մանկական զգեստապահարան - Զգեստահարանը 5 դռնանի է, այն ամբողջությամբ, ներառյալ միջնապատերը պետք է պատրաստված լինի 18 մմ հաստությամբ E0 դասի լամինացված ՓՏՍ-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Հետնապատը պետք է լինի 3 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և լինի համադրելի լամինացված ՓՏՍ գույնի: Աշխատանքային հարթության եզրերը պետք է լավ հղկված ու մշակված լինեն, առանց ծլեպների: Զգեստապահարանի արտաքին չափսերն են՝ 1698 x 300 x 1444 մմ (Լ x Խ x Բ), յուրաքանչյուր սեկցիայի ներսի չափսերն են՝ 318 x 300 x 1144 մմ (Լ x Խ x Բ): Բոլոր 5 բաժիններում էլ, ողջ լայնությամբ և խորությամբ պետք է նախատեսված լինի՝ վերևի մասում գլխարկի, իսկ ներքևում կոշիկների համար առանձնացված հետևյալ չափսերի՝ 318 x 300 x 186 մմ (Լ x Խ x Բ) տեղեր (բաց դարակներ): Բոլոր սեկցիաներում՝ գլխարկների դարակի տակից՝ երկու հանդիպակաց պատերին պետք է ամրացված լինի երկու հատ մետաղական, բարձրորակ, երկտեղանի կախիչ: Դռներն ամրացված են և փակվում են 3-ական բարձրորակ ծխնիներով: Դռներին ամրացվում են երեխաների օգտագործման համար հարմարավետ, մետաղական բռնակներ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Զգեստապահարանը տակից պետք է ունենա մետաղյան կոնստրուկցիա, որը կծառայի որպես ոտք, որը ամբողջությամբ պետք է պատրաստված լինի 25 x 25 x 2 մմ քառանկյուն մետաղական խողովակից: Այն պետք է շրջանածև ընդգրկի զգեստապահարանի ներքևի հատվածը, բացառությամբ դիմացի հատվածից՝ տեղադրվելով բոլոր եզրերից 20 մմ դեպի ներս: Չորս ոտիկների հաշվին բարձրությունը պետք է լինի 300 մմ, իսկ յուրաքանչյուր կողային զույգ ոտիկները պետք է միացված լինեն միմյանց 25 x 25 x 2 մմ քառանկյուն մետաղական խողովակներով ոտքերի ամենաստորին հատվածում: Ոտիկները պետք է խցանված լինեն պլաստիկե խցաններով՝ 4-6 մմ հաստությամբ: Մետաղական կոնստորուկցիան ամբողջությամբ նախապես պետք է յուղազերծվի, ապա ջերմային փոշեներկվի: Զգեստահարանը պետք է լինի ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում վաճառողը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Զգեստապահարանը պետք է ունենա պատին ամրացնելու առնվազն երկու հարմարանքներ: Ապրանքը պատրաստելու համար պետք է օգտագործվեն էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ լամինացված E0 դասի ՓՏՍ, ներկանյութեր: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է լինի հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների և ծլեպների: | հատ | 4 |
| 1.2 | Մանկական զգեստապահարան - Զգեստահարանը 3 դռնանի է, այն ամբողջությամբ, ներառյալ միջնապատերը պետք է պատրաստված լինի 18 մմ հաստությամբ E0 դասի լամինացված ՓՏՍ-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Հետնապատը պետք է լինի 3 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և լինի համադրելի լամինացված ՓՏՍ գույնի: Աշխատանքային հարթության եզրերը պետք է լավ հղկված ու մշակված լինեն, առանց ծլեպների: Զգեստապահարանի արտաքին չափսերն են՝ 1026 x 300 x 1444 մմ (Լ x Խ x Բ), յուրաքանչյուր սեկցիայի ներսի չափսերն են՝ 318 x 300 x 1144 մմ (Լ x Խ x Բ): Բոլոր 3 բաժիններում էլ, ողջ լայնությամբ և խորությամբ պետք է նախատեսված լինի՝ վերևի մասում գլխարկի, իսկ ներքևում կոշիկների համար առանձնացված հետևյալ չափսերի՝ 318 x 300 x 186 մմ (Լ x Խ x Բ) տեղեր (բաց դարակներ): Բոլոր | հատ | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| | սեկցիաներում՝ գլխարկների դարակի տակից՝ երկու հանդիպակաց պատերին պետք է ամրացված լինի երկու հատ մետաղական, բարձրորակ, երկտեղանի կախիչ: Դռներն ամրացված են և փակվում են 3-ական բարձրորակ ծխնիներով: Դռներին ամրացվում են երեխաների օգտագործման համար հարմարավետ, մետաղական բռնակներ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Զգեստապահարանը տակից պետք է ունենա մետաղկան կոնստրուկցիա, որը կծառայի որպես ոտք, որը ամբողջությամբ պետք է պատրաստված լինի 25 x 25 x 2 մմ քառանկյուն մետաղական խողովակից: Այն պետք է շրջանաձև ընդգրկի զգեստապահարանի ներքևի հատվածը, բացառությամբ դիմացի հատվածից՝ տեղադրվելով բոլոր եզրերից 20 մմ դեպի ներս: Չորս ոտիկների հաշվին բարձրությունը պետք է լինի 300 մմ, իսկ յուրաքանչյուր կողային զույգ ոտիկները պետք է միացված լինեն միմյանց 25 x 25 x 2 մմ քառանկյուն մետաղական խողովակներով ոտքերի ամենաստորին հատվածում: Ոտիկները պետք է խցանված լինեն պլաստիկե խցաններով՝ 4-6 մմ հաստությամբ: Մետաղական կոնստորուկցիան ամբողջությամբ նախապես պետք է յուղազերծվի, ապա ջերմային փոշեներկվի: Զգեստահարանը պետք է լինի ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում վաճառողը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Զգեստապահարանը պետք է ունենա պատին ամրացնելու առնվազն երկու հարմարանքներ: Ապրանքը պատրաստելու համար պետք է օգտագործվեն էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ լամինացված E0 դասի ՓՏՍ, ներկանյութեր: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է լինի հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների և ծլեպների: | | |
| 1.3 | Երեխաների կոշիկները փոխելու համար նստարաններ: Նստարանը հավաքովի գույք է, որը բաղկացած է նստելատեղից, տակամասի մետաղական ոտքերից և հենակից:<br>Նստելատեղը և տակամասը պետք է պատրաստված լինեն հաճարի փայտից, պարագծի շուրջը և նստարանի անկյունները պետք է լինեն կլորացված: Նստարանի մակերեսը պետք է լինի խնամքով հղկված, բարձրորակ խոնավակայուն և չսահող երկու շերտով պատված բարձրորակ անգույն, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ լաքով: Նստելատեղի չափերն են՝ 1500մմ երկարություն, 250մմ լայնություն և 40մմ հաստություն: Տակամասի չափերն են՝ 1300մմ երկարություն, 100 մմ լայնություն և 40 մմ հաստություն: Նստարանի մետաղական ոտքերը պետք է ապահովեն 250մմ բարձրություն, ունենան փակ շղթայանման կառուցվածք, ոտքերի բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորելու հնարավորությամբ: Նստարանի մետաղական ոտքերը և հենակը պետք է պատրաստված լինեն 20x20x2,0 մմ մետաղական քառակուսի խողովակից, միացումները՝ զոդման եղանակով, զոդման կարանները պետք է լինեն հղկված, փոշեներկված բարձրակարգ մուգ մոխրագույն, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ ներկանյութով: Մետաղական կառուցվածքը նստատեղին միացվում է 6 հատ միջանցիկ հեղյուսե մանեկային ամրացումով, իսկ տակամասին՝ 3: Նստատեղի կողմից հեղյուսը պետք է լինի ողորկ, իսկ եզրերը՝ նստատեղի հարթության վրա:<br>Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ներկանյութերի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: | հատ | 4 |
| | 2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԻ ԽՄԲԱՍԵՆՅԱԿ | | |
| 2.1 | Մանկական սեղան՝ չորստեղանի /4-5 տարիքային խմբի համար/: Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, անկյունները պետք է լինեն կլորացված: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում վաճառողը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը | հատ | 16 |

| | | | |
|---|---|---|---|
| | և/կամ նկարազարդումը պետք է լինի հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, ցանկալի է լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Մետաղական կմախքով մանկական սեղանի չափսերն են՝ 1000 x 700 x 520 մմ (Ե x Լx Բ): Սեղանի աշխատանքային հարթության համար պետք է օգտագործվի լամինացված E0 դասի ՓՏՍ՝ 18 մմ հաստությամբ: Լամինացված E0 դասի ՓՏՍ-ի աշխատանքային հարթության եզրերը պետք է լինեն հղկված, մշակված և ողորկ, շրջափակվեն 0,8-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC): Բոլոր անկյունները պետք է կլորացվեն: Սեղանի կմախքը պատրաստված է 25 x 25 x 2.0 մմ չափսի մետաղական քառանկյուն խողովակներից, կմախքի արտաքին չափերը՝ 800 x 600 x 500 մմ (Ե x Լ x Բ), որին զոդման միջոցով ամրացվում են 25 x 25 x 2.0 մմ տրամաչափի քառանկյուն խողովակից 4 մետաղական ոտքերը, որոնք էլ զոդման եղանակով շրջանաձև կապով միացվում են իրար հետ 15 x 15 x 2.0 մմ տրամաչափի քառանկյուն խողովակով՝ ամենաստորին հատվածում: Ոտքերը պետք է խցանված լինեն պլաստիկե խցաններով՝ 6 մմ հաստությամբ: Զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ, մետաղը փոշեներկվում է բարձրակարգ ներկանյութով: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի լամինացված E0 դասի ՓՏՍ-ի, ներկանյութերի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: | | |
| 2.2 | Մանկական աթոռ /4-5 տարիքային խմբի համար/: Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանին համապատասխան, մնացած չափսերը և արտաքին տեսքի լուծումները համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում վաճառողը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է լինի հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների, իսկ չգունավորված հատվածները երկու շերտով պատված բարձրորակ անգույն, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ լաքով: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Հիմնական կոնստրուկտիվ տարրերը պետք է պատրաստված լինեն փայտից: Նստելատեղը պետք է պատրաստված լինի 9-10 մմ հաստությամբ նրբատախտակից, չափսերը՝ 330 x 300 մմ, մինչև նստելատեղը բարձրությունը հատակից՝ 290մմ: Նստելատեղից աթոռի հենակի բարձրությունը 260 մմ: Աթոռի հենակը պետք է պատրաստված լինի 9-10 մմ հաստությամբ նրբատախտակից, չափսերը՝ 140 x 300 մմ: Աթոռի կոնստրուկցիան հավաքվում է շիպերով և պտուտակներով, նստատեղը ամրացված է պտուտակներով, եզրերը մշակված են, անկյունները կլորացված: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի լաքերի, ներկանյութերի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: | հատ | 64 |
| 2.3 | Դաստիարակի սեղան - չափսերը՝ 1200x600x760մմ: Սեղանի աշխատանքային հարթության, կողապատերի (ոտքերի), հետնապատի և գզրոցի  համար  պետք է օգտագործվի լամինացված E0 դասի ՓՏՍ 18մմ հաստությամբ,  գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), ոչ աշխատանքային | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | հարթության եզրերը պետք է շրջափակվեն 0.4մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC)։ Սեղանի առջևը փակվում է 18մմ հաստությամբ ՓՏՍ-ով (դիմապատը)՝ որի չափսերն են՝ 1164x600մմ, որը տեղադրվում է սեղանի աշխատանքային հարթության տակից, եզրին հավասար և ամրանում է աշխատանքային հարթության եզրին (տակից) և կողապատերի (ոտքերի) ներսի մասին։ Կողապատերի (ոտքերի) լայնությունը՝ 570մմ։ Կողապատերը աշխատանքային երեսին ամրացնելու համար երեսի տակից ամրացվում է լրացուցիչ 80-100 մմ լայնության լամինացված E0 դասի ՓՏՍ 18մմ։ Կողապատերի (ոտքերի) եզրերը կշրջափակվեն 0.4-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին պետք է պտուտակների միջոցով ամրացվի ոտիկներ՝ 5-6մմ բարձրությամբ։ Սեղանի աշխատանքային հարթության վերևի աջ և ձախ եզրային անկյուններում համակարգչային տեխնիկայի լարերի համար պետք է տեղակայվի միջանցիկ անցքեր՝ տեղակայված փակվող խցաններով։ Սեղանը կունենա առանձին, 4 անիվի վրա շարժվող գզրոց, չափսերը՝ 410x460x690մմ, երեք դարակներով համապատասխանաբար չափսերով՝ 130-150; 130-150; 250-350մմ, հնարավոր առավելագույն խորությամբ, միասնական փականով փակվող, գզրոցի հետնապատը նույնպես պետք է լինի նույն ՓՏՍ-ից, դարակները բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ սահնակներով սալյասկա (գնդիկավոր տեսակի ամերիկանկա)։ Սեղանը, կողապատերը (ոտքերը), դիմապատը, գզրոցը և պլաստիկե եզրաժապավենները պետք է լինեն նույն՝ ՓՏՍ-ի, բնափայտի երանգներով ոչ շատ մուգ գույնի։ Դարակները պետք է ունենան օվալաձև կամ ուղիղ մետաղական բռնակներ, որոնց երկարությունը պետք է լինի առնվազն 100մմ։ Միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով։ Սեղանի ոտքերին պտուտակներով պետք է ամրանան 4 պլաստիկե բաց գույնի խցաններ՝ 5-6մմ հաստությամբ, որը կապահովի հատակից առնվազն 4-6 մմ բարձրություն։ Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի լամինացված E0 դասի ՓՏՍ-ի, համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն)։ Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ։ Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը։ | | |
| 2.4 | Աշխատանքային աթոռ - Աթոռի մետաղական կմախքը պետք է պատրաստված լինի մետաղական սնամեջ օվալաձև (30x15x2.0մմ), կամ կլոր (Փ 20x2մմ) խողովակներից, հնարավոր է նաև խողովակը լինի երկու կողմերից հավասարաչափ սեղմված և ունենա կլորացված ուղղանկյան ձև։ Աթոռի մետաղական կմախքի զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ։ Մետաղական կոնստրուկցիան ամբողջությամբ նախապես պետք է յուղազերծվի, ապա ջերմային փոշեներկվի բարձրակարգ, էկոլոգիապես մաքուր և անվնաս սև գույնի ներկանյութով։ Նստելատեղի բարձրությունը հատակից 450մմ, թիկնակի բարձրությունը հատակից 850մմ։ Նստելատեղի չափսերն են՝ առնվազն 420x385մմ, թիկնակը և նստելատեղը պատրաստված լինեն 8-10 մմ հաստության նրբատախտակից, որին ամրացվում է առնվազն 15-25 մմ հաստության և 20-30 կգ/մ3 խտության սպունգ։ Թիկնակը և նստատեղը երեսպատված լինեն հաստ, որակյալ, ամուր, դժվարամաշ կտորով։ Նստելատեղը և թիկնակը առանձին են իրարից։ Թիկնակի վերևի հատվածում և մետաղական և փայտային մասերը ունեն կիսաշրջանի, օվալաձև տեսք։ Թիկնակի պաստառապատված մասի չափերն են 400մմx300մմ։ Ոտքերի եզրերը(ծայրերը) պետք է խցանված լինեն պլաստիկե սև գույնի խցաններով, որոնց կողային պատերի հաստությունը՝ 2մմ, տակի մասինը՝ 4-6մմ։ Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի ներկանյութերի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն)։ Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ։ Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը։ | հատ | 2 |
| 2.5 | Գրապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք պատրաստված լինի լամինացված 18 մմ հաստությամբ E0 դասի ՓՏՍ-ից, արտաքին չափսերը՝ 800x 400 x 1800 մմ ( Լ x Խ x Բ)։ Գրապահարանը պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | նյութերով, անկյունները պետք է լինեն հարթ և անվտանգ, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներով: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում վաճառողը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի հարմարավետ ըստ նպատակային նշանակության շահագործման ժամանակ: Գրապահարանը ունի 300 մմ բարձրությամբ 5 դարակաշար, որոնցից վերևից սկսած 2-ը փակվում են եզրերը մշակված, թրծված թափանցիկ երկփեղկ 6մմ հաստությամբ ապակյա դռներով՝ յուրաքանչյուրը 2 բարձրորակ ծխնիով, իսկ ներքևի 3-ը՝ լամինացված 18 մմ հաստությամբ E0 դասի ՓՏՍ-ից երկփեղկ դռներով՝ յուրաքանչյուրը 2 բարձրորակ ծխնիով: Բոլոր դռները պետք է ունենանմետաղական օվալաձև բռնակներ: Դարակները պետք է պետք է պատրաստված լինեն լամինացված 18 մմ հաստության E0 դասի ՓՏՍ-ից, որոնց աշխատանքային հարթության եզրերը շրջափակվեն 0.8-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ, բաց գույնի (բացառությամբ սպիտակի): Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Գրապահարանի հետնապատը պետք է լինի 3 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն E0 դասի ՓՏՍ գույնի: Պահարանը ամբողջ պարագծով պետք է ունենա շրջանակաձև ոտքեր: Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափերն են՝ 700 x 300 x 100 մմ (Լx Խ x Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի լամինացված E0 դասի ՓՏՍ-ի, համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: | | |
| 2.6 | Զգեստապահարան աշխատակիցների համար - Զգեստապահարանը պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի ողորկ, առանց ծլեպների և արտադրական խոտանների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն հարթ և անվտանգ, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներով: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում վաճառողը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի հարմարավետ ըստ նպատակային նշանակության շահագործման ժամանակ: Զգեստապահարանն ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18 մմ հաստությամբ E0 դասի ՓՏՍ-ից արտաքին չափսերը՝820 x 450 x 2000 մմ (Լ x Խ x Բ):Զգեստապահարանը վերևից ունի 400 մմ բարձրությամբ 1 դարակաշար, որից 60 մմ հեռավորությամբ տակից ամարցվում է ¾ դյույմ քրոմապատ, մետաղական երկաթյա ամուր և որակյալ ձող՝ համապատասխան ամրացումներով: Զգեստապահարանն ունի 2 իրար հավասար դուռ, դռները՝ լամինացված 18 մմ հաստությամբ E0 դասի ՓՏՍ-ից: Դռներից յուրաքանչյուրը ամրացվում է 3-ական ծխնիով: Դռները պետք է ունենան մետաղական օվալաձև բռնակներ: Աշխատանքային հարթության եզրերը շրջափակվեն 0.8-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով : Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթեփային սալից(ԴՎՊ) և նույն E0 դասի ՓՏՍ-ի գույնի: Պահարանը ամբողջ պարագծով պետք է ունենա շրջանակաձև ոտքեր, որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ՝ 8 մմ հաստությամբ: Ոտքերըը պետք է լինեն կարգավորվող: Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 800 x420 x 100 մմ (Լ x Խ x Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի  հաստությունը՝ առնվազն 8 մմ է: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի լամինացված E0 դասի ФՏU-ի, համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: | | |
| 2.7 | Շարժական գրատախտակ: Շարժական գրատախտակ՝ ֆլիպչարտ գրատախտակ՝ մարկերային, ալյումինե շրջանակով, շարժական ոտքերով, հենակով և արգելակող անիվներով: Չափսերը՝ 900x1200x2000մմ, ֆլիպչարթ (անգլ.՝ flip chart-անդրաձիգ գծագիր), գրասենյակային պատկերակալ՝ նոթատետրի շրջելիության սկզբունքով թղթի կամ թղթերի փաթեթի համար ամրակներով մագնիսամարկերային գրատախտակ, հավաքածուի մեջ անպայման պետք է լինի 2 մարկեր և 1 ջնջոց: | հատ | 1 |
| 2.8 | Աշխատանքային կենտրոն /պահարաններ զարգացնող միջավայրի համար/: ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանի պահանջներին համապատասխան: Աշխատանքային կենտրոնը պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի ողորկ, առանց ծեպների և արտադրական խոտանների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն հարթ և անվտանգ, անհրաժեշտության դեպքում՝ անվտանգությունն ապահովող հատուկ դետալներով: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում վաճառողը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի հարմարավետ ըստ նպատակային նշանակության շահագործման ժամանակ: Աշխատանքային կենտրոնը պատրաստված է 18 մմ հաստությամբ լամինացված E0 դասի ФՏU-ից, արտաքին չափսերն են՝ 2500 x 450 x 1500 մմ ( Լ x Խ x Բ): Աշխատանքային կենտրոնը հորիզոնական դիրքով բաժանված է երեք հավասարաչափ դարակներից: Յուրաքանչյուր հորիզոնական շարքում պետք է ուղղահայաց բաժանվի 4 մասերի: Ընդամենը պետք ՝ ունենա 10 փակվող դռնակ Հետնապատը պետք է լինի 3 մմ հաստությամբ լամինացված փայտաթեփային սալից (ԴՎՊ), համադրելի E0 դասի ФՏU-ի գույնի հետ: Պահարանը պետք է ունենա առնվազն 6 մետաղական ոտքեր՝ կարգավորման հնարավորությամբ, իսկ դրանց դիմացից պահարանի դիմացի և կողային հատվածներում անկյունակների օգնությամբ պետք է ամրացվեն 80 մմ լայնությամբ E0 դասի ФՏU: Անհրաժեշտության դեպքում աշխատանքային կենտրոնը կարող է ամրացվնել պատին:<br>Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի լամինացված E0 դասի ФՏU-ի, ներկանյութերի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: | հատ | 1 |
| | 3. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԻ ՆՆՋԱՐԱՆ | | |
| 3.1 | Երկհարկանի մահճակալ՝ ներքնակներով  - Պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում վաճառողը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել | հատ | 16 |

| | | | |
|---|---|---|---|
| | համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է լինի հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, ցանկալի է լինի կարգավորման հնարավորությամբ և հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Երկիարկանի մահճակալի չափսերն են՝ 1400 x 600 x 1400 մմ ( Ե x Լ x Բ), այն պատրաստվում է 18 մմ լամինացված E0 դասի ՓՏՍ-ից: Առաջին հարկի մահճակալի բարձրությունը գետնից 300 մմ, երկու հարկերի միջև տարածություն՝ 800 մմ: Երկու հարկերի մահճակալների գծային չափսերն էլ նույնն են և ունեն նույն խորությունը՝ 150-200 մմ: Ունի հետևյալ չափսերի՝ 400 x (35 x 35) x 185 x 1170 մմ ( Լ x Խ x Բ) փայտե աստիճան, (35 x 35) մմ չափսերի փայտյա աստիճանհարթակներով, որոնց միջև քայլերի հեռավորությունը՝ 250-300 մմ: Ամրագոտիները նույնպես պատրաստվում է 18մմ լամինացված E0 դասի ՓՏՍ-ից, ունեն 300 մմ լայնություն և ալիքաձև տեսք: Ալիքի խորությունը 50-100 մմ է , երկարությունը՝ 200- 300 մմ: Ներքնակների տակ գցվում է ամբողջական 18մմ հաստությամբ լամինացված E0 դասի ՓՏՍ, որոնց վրա օդափոխության համար պետք է բացվեն 30 մմ տրամագծով առնվազն երեք անցք: Ներքնակը հենվում է կողերով, լայնությամբ անցնող 18մմ հաստությամբ 200 մմ լայնության լամինացված E0 դասի ՓՏՍ-ից պատրաստված հինգ ամրագոտիների և սնարներին ամրացված դետալների վրա: Մահճակալի ներքնակի երեսի կտորը՝ 100% բամբակյա, լցոնված պարունակությունը՝ 100% բուրդ կամ բժշկական բամբակ: Չքրտնեցնող է, հակաալերգիկ և էկոլոգիապես մաքուր հումքից, արտաքինից կարված երեք շարքով, յուրաքանչյուր շարքը 5-ական կոճով: Լամինացված E0 դասի ՓՏՍ-ի աշխատանքային հարթության բոլոր անկյունները պետք է կլորացվեն, եզրերը շրջափակվեն 1-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), կամ անկյուններին ամրացվեն պլաստմասե կամ ռետինե կլորացված հատուկ դետալներ: Մահճակալի կոնստրուկցիոն բոլոր դետալները հավաքված են պտուտակներով, փայտե չիվիներով, էմուլսիայով: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված և երաշխավորված ամրակցումներով: Ոտքերին պետք է ամրացվեն պոլիմերային խցաններով՝ 8 մմ հաստությամբ: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի լամինացված E0 դասի ՓՏՍ-ի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: | | |
| 3.2 | Պահարան՝ սպիտակեղենի համար - Պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում վաճառողը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ գունավորումը և/կամ նկարազարդումը պետք է լինի հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Պահարանը պատրաստված է 18 մմ հաստությամբ լամինացված E0 դասի ՓՏՍ-ից: Չափսերը՝ 800 x 450 x 1800 մմ ( Լ x Խ x Բ): Պահարանը բաժանված է հատևյալչափսերի(ներսի)՝ 800 x 450 x 450 մմ ( Լ x Խ x Բ) չորս դարակների, 18 մմ հաստությամբ լամինացված E0 դասի ՓՏՍ-ից պատրաստված դռներով փակվող, որոնցից յուրաքանչյուրը ամրացված է 3-ական ծխնիով: Բոլոր դռները պետք է ունենան օվալաձև բռնակներ: Աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 0,8-2 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պոլիմերային եզրաժապավենով (PVC): Բոլոր անկյունները լինեն կլորացված կամ անկյուններին ամրացված լինեն պլաստմասե կլորացված հատուկ դետալներ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Հետնապատը պետք է լինի 3 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից (ԴՎՊ) և E0 դասի ՓՏՍ-ի գույնի:Պահարանի կոնստրուկցիան հավաքված է պտուտակներով, փայտե չիվիներով և էմուլսիայով: Պահարանը պետք է ունենա 50 x 60 x 150 մմ ( Ե x Լ x Բ) չորս առանձին փայտյա, կամ փոշեներկված մետաղական ոտքեր: | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | Ոտքերի տակը հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով:<br>Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի լամինացված E0 դասի ՓՏՍ-ի, համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն):<br>Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: | | |
| | 4. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԻ ԽՄԲԱՍԵՆՅԱԿԻ ԲՈՒՖԵՏԱՅԻՆ ՄԱՍ | | |
| 4.1 | Պահարան՝ սպասքի համար: Պատրաստված 18 մմ հաստությամբ E0 դասի լամինացված ՓՏՍ-ից:<br>Արտաքին չափսերն են ՝ 800 x 500 x 2000 մմ ( Լ x Խ x Բ), պահարանը բաժանված է հատևյալ չափսի (ներառյալ լամինացված ՓՏՍ-ի հաստությունը)՝ 800 x 500 x 450 մմ ( Լ x Խ x Բ) երեք դարակաշարերի իսկ ներքևի մասում ունի հատևյալ չափսի(ներառյալ լամինացված ՓՏՍ-ի հաստությունը)՝ 800 x 500 x 550 մմ ( Լ x Խ x Բ) մեկ դարակ:<br>Պահարանը փակվում է 18 մմ հաստությամբ լամինացված ՓՏՍ-ից պատրաստված երկու դռներով, որոնցից յուրաքանչյուրը ամրացված է 3-ական ծխնիով:<br>Դռները պետք է ունենան օվալաձև բռնակներ:<br>Աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 0,8-2 մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ ոչ աշխատանքային հարթության եզրագծերը՝ 0.4-1.0 մմ հաստության պլաստիկ եզրաժապավենով (PVC):<br>Բոլոր անկյունները լինեն կլորացված կամ անկյուններին ամրացված լինեն պլաստմասե կլորացված հատուկ դետալներ:<br>Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով:<br>Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և փայտի գույնի:<br>Պահարանը ամբողջ պարագծով պետք է ունենա (30 x 30 x 2.0) մմ չափսի մետաղական քառանկյուն խողովակներից զոդման եղանակով շրջանակաձև միացված ոտքեր, որոնց անկյունների միացումը 45 աստիճան հատվածքով: Զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ, մետաղը փոշեներկվում է բարձրակարգ ներկանյութով:<br>Ոտքեր հանդիսացող, տակը դրված ուղղանկյուն հենակի արտաքին չափսերն են՝ 700 x 500 x 200 մմ ( Լ x Խ x Բ), որի հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8 մմ է:<br>Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի լամինացված E0 դասի ՓՏՍ-ի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն):<br>Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: | հատ | 2 |
| | 5. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԻ ՏՆՕՐԵՆԻ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿ | | |
| 5.1 | Փաստաթղթերի պահման մետաղական պահարան: Պահարանի արտաքին չափերը, մմ  (ԼxԲxԽ) 500x1200x500, մետաղի հաստությունը առնվազն 3մմ պողպատյա թիթեղ, դարակների քանակը՝ 4, դուռը՝ բանալիով մեխանիկական փականով: Ոտքերը՝ մետաղական անիվներով (անիվի տրամագիծը՝ ոչ փոքր 60 մմ-ից:) Անիվները փակված պետք է լինեն մետաղյա անկյունաձև թիթեղով: Ծխնիները՝ ներքին, գլանաձև: Պահարանի մակերևույթը՝ հարթ փոշեներկված, ներկածածկույթը՝ մուգ մոխրագույն, սինթետիկ, էմալ: Միացումները՝ զոդման եղանակով, կարանները եռակցումները՝ հղկված ու հարթ: | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 5.2 | Բազկաթոռ ղեկավարի: Շարժական բազկաթոռ հինգ անվակների վրա՝ միմյանց կապակցված հինգ թևանի ոտքով: Խաչուկը՝ ոտքը՝ քրոմապատ մետաղից, բռնակները քրոմապատ մետաղից արմունկի հենման հատվածները՝ փափուկ, արհեստական կաշվեպատ, բարձրության սահուն կարգավորմամբ՝ մեղմնացուցիչով: Նստատեղը և թիկնակը՝ փափուկ՝ 80-մմ-ից ոչ պակաս սպունգի հաստությամբ և 33-40% խտությամբ, պաստառապատված սև բարձրորակ արհեստական կաշվով կամ կտորով: Թիկնակի բարձրությունը 75սմ-ից ոչ պակաս, ետ-առաջ կարգավորվող և ֆիքսվող: 140կգ բեռնվածության համար: Նստոցի չափսերը՝ 550x560x750մմ: նշված ապրանքի չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±5%: | հատ | 1 |
| 5.3 | Սեղան ղեկավարի՝ բաղկացած է սեղանից, դիմադիրից, գզրոցից և կցասեղանից: Սեղանի չափսերն են՝ 1800x900x780մմ (LxԵxԲ): Սեղանի, դիմադիրի և կցասեղանի երեսները պատրաստված են 36-40մմ հաստությամբ լամինացված բարձրորակ ФSU-ից, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 0.4մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Սեղանն մի կողմում ունի միասնական փականով փակվող 4 դարակներ, որոնք բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ սահնակներով (սայլասկա՝ գնդիկավոր տեսակի ամերիկանկա), բարձրորակ մետաղական բռնակներով: Սեղանն, դիմադիրը և կցասեղանը, լամինացված ФSU-ի ոտքերից բացի կարող են ունենալ նաև լրացուցիչ փայտյա ոտքեր, հաստությունը 90մմ: Դիմային մասը փակված է 1664x700մմ որակյալ, 18մմ հաստությամբ լամինացված ФSU-ով: Դիմադիրի չափերը 700x1000x740մմ (LxԵxԲ): Դիմադիրի 2 ոտքերը նույնպես պատրաստված պետք է լինեն 36-40մմ հաստեցված լամինացված բարձրորակ ФSU-ից, դիմադիրը պետք է ունենա միջնորմ, իսկ սեղանին չիպվող մասի անկյունները լինեն կլորացված: Կցասեղանի չափսերն են՝ 600x800x650մմ (LxԵxԲ): Յուրաքանչյուր կողմում ունի ունի միասնական փականով փակվող 3 դարակներ, որոնք բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ սահնակներով (սայլասկա՝ գնդիկավոր տեսակի ամերիկանկա) առնվազն 35մմ լայնությամբ:<br>Դարակները պետք է ունենան օվալաձև կամ ուղիղ մետաղական բռնակներ, որոնց երկարությունը պետք է լինի առնվազն 100մմ: Սեղանի ոտքերին պտուտակներով պետք է ամրանան 4 պլաստիկե բաց գույնի խցաններ՝ 5-6մմ հաստությամբ, որը կապահովի հատակից առնվազն 4 -6 մմ բարձրություն: | հատ | 1 |
| 5.4 | Աշխատանքային աթոռ: Աշխատանքային աթոռը նախատեսված է ուսուցչանոցի և բոլոր դասասենյակների համար: Աթոռի մետաղական կմախքը պետք է պատրաստված լինի մետաղական սնամեջ օվալաձև (30x15x2.0մմ), կամ կլոր (Ф 20x2մմ) խողովակներից, հնարավոր է նաև խողովակը լինի երկու կողմերից հավասարաչափ սեղմված և ունենա կլորացված ուղղանկյան ձև: Աթոռի մետաղական կմախքի զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ և փոշեներկված բարձրակարգ սև գույնի ներկանյութով: Նստելատեղի բարձրությունը հատակից 450մմ, թիկնակի բարձրությունը հատակից 850մմ: Նստելատեղի չափսերն են՝ 420x385մմ (առնվազն): Թիկնակը և նստելատեղը պատրաստված պետք է լինեն 8-10 մմ հաստության նրբատախտակից, որին ամրացվում է առնվազն 15-25 մմ հաստության և 20-30 կգ/մ3 խտության սպունգ: Թիկնակը և նստատեղը երեսպատված պետք է լինեն հաստ, որակյալ, ամուր, դժվարամաշ կտորով, գույնը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Նստելատեղը և թիկնակը առանձին են իրարից: Թիկնակի վերևի հատվածում և մետաղական. և փայտային մասերը ունեն նույն տեսքը: Թիկնակի պաստառապատված մասի չափերը 400մմx300մմ: Ոտքերի եզրեր (ծայրերը) պետք է խցանված լինեն պլաստիկե սև գույնի խցաններով, որոնց կողային պատերի հաստությունը՝ 2մմ, տակի մասինը՝ 4-6մմ: | հատ | 6 |
| 5.5 | Գրապահարան: Գրապահարանը պատրաստված է լամինացված 18 մմ հաստությամբ ФSU-ից (բացառությամբ հետնապատի), գույնը համաձայնեցվում է պատվիրատուի հետ:<br>Արտաքին չափսեր՝ 820×410×2100 մմ (L×Խ×Բ),որից օգտագործվող հատված՝ 820×410×2000 մմ, ոտքի հատված՝ 820×410×100 մմ (դիմացից փակված ФSU-ով, ետնամասը բաց)<br>Կողային մասերը երկու կողմից 410×2100 մմ ФSU-ն ամբողջական, միացումները կատարվում թաքնված՝ պտուտակներով և մետաղական անկյունակներով:<br>Օգտագործվող հատվածը ունի 5 դարակաշար՝ բարձրությունը 400 մմ, վերևի 3 դարակները փակվում են թրծված սպիտակ թափանցիկ, | հատ | 2 |

| | | | |
|---|---|---|---|
| | թրծված 5–6 մմ հաստությամբ ապակե երկփեղկ դռներով, որոնցից յուրաքանչյուրը ամրացվում է՝ 3 ծխնիով: Ներքևի 2 դարակները փակվում են լամինացված 18 մմ ՓՏՍ-ից երկփեղկ դռներով, յուրաքանչյուրը 2 ծխնիով: Բոլոր դռները ունեն օվալաձև կամ ուղիղ մետաղական, առնվազն 100 մմ երկարությամբ մետաղական բռնակներ:<br>Դարակները նույպես պատրաստված լամինացված 18 մմ ՓՏՍ-ից, աշխատանքային հարթության եզրերը շրջափակված՝ 0.8–1 մմ հաստությամբ PVC-ով, ոչ աշխատանքային եզրագծերը՝ 0.4–1.0 մմ հաստությամբ PVC-ով, աշխատանքային հարթությունը անփայլ, բաց գույնի, դարակները պահող դետալները պետք է ունենան առնվազն 22 մմ երկարություն, 5 մմ տրամագիծ: Միացումները՝ թաքնված ամրակցումներով:<br>Հետնապատը 3 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալ (ԴՎՊ)՝ նույն ՓՏՍ-ի երանգին համադրելի, որը ամրացված է պինդ և առանց խուլթերի:<br>Ոտքերը 4 պլաստիկ բաց գույնի խցաններ՝ 5–6 մմ հաստությամբ, որոնք ապահովում են հատակից առնվազն 4–6 մմ բարձրություն: | | |
| 5.6 | Զգեստապահարան: Զգեստապահարանը ամբողջությամբ (բացառությամբ հետնապատից) պետք է պատրաստված լինի լամինացված 18մմ հաստությամբ ՓՏՍ-ից, գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ, արտաքին չափսերը՝ 820x450x2100մմ (ԼxԽxԲ), որից 820x450x2000մմ (ԼxԽxԲ) հատվածը հանդիսանալու է օգտագործվող հատված, իսկ ստորին 820x450x100մմ (ԼxԽxԲ) հատվածը հանդիսնալու է որպես ոտք: 2 կողմերի 450x2100մմ ՓՏՍ-ներն պետք է լինեն ամբողջական, իսկ ոտքի հատվածը դիմացից փակվի ՓՏՍ-ով, միացումները պետք է կատարվեն մետաղական անկյունակներով, ոտքի հետևի մասը թողնել բաց:Զգեստապահարանը վերևից ունի 400մմ բարձրությամբ 1 դարակաշար, որը պահող դետալները պետք է ունենան առնվազն 22 մմ երկարություն և 5մմ տրամագիծ: Դեպի ներքև, 82-85մմ հեռավորությամբ տակից ամարցվում է ¾ դյույմ քրոմապատ, մետաղական երկաթյա ձող՝ համապատասխան ամրացումներով: Զգեստապահարանն ունի 2 իրար հավասար դուռ, դռները՝ լամինացված 18մմ հաստությամբ ՓՏՍ-ից: Դռներն ամրացվում են 3-ական ծխնիներով: Դռները կունենան մետաղական բռնակներ: Աշխատանքային հարթության եզրերը կշրջափակվեն 0.8-1.2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Աշխատանքային հարթությունը պետք է լինի անփայլ: Բոլոր միացումներն իրականացնել թաքնված ամրակցումներով: Հետնապատը պետք է լինի 4 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալից(ԴՎՊ) և նույն ՓՏՍ-ի գույնի: Հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին, տակից պետք է ամրացվի պլաստիկե մուգ գույնի տակդիրներ, որոնց տակի պատերի հաստությունը՝ առնվազն 8մմ է: | հատ | 1 |
| | 6. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԻ ՄԵԹՈԴԻՍՏԻ ՍԵՆՅԱԿ | | |
| 6.1 | Ուսուցչի սեղան գզրոցով:<br>Չափսերը՝ 1200×600×760 մմ:<br>Սեղանը և գզրոցը ամբողջությամբ պատրաստված է լամինացված 18 մմ հաստությամբ ՓՏՍ-ից, որի աշխատանքային հարթության եզրերը՝ շրջափակված 1–2 մմ հաստության PVC եզրաժապավենով, իսկ ոչ աշխատանքային եզրերը՝ 0.4 մմ հաստության PVC եզրաժապավենով:<br>Գույնը համաձայնեցվում է պատվիրատուի հետ:<br>Դիմապատը՝ 18 մմ հաստությամբ ՓՏՍ, չափսերը 1164×600 մմ, տեղադրվում է աշխատանքային հարթության տակ, հավասար եզրին և ամրանում աշխատանքային հարթության եզրին և կողապատերի ներսի մասին:<br>Կողապատերի (ոտքեր) լայնությունը 570 մմ, եզրերը շրջափակված 0.4–1 մմ հաստությամբ PVC եզրաժապավենով, իսկ հատակին հպվող եզրերի վերջնամասերում ամրացվում են պտուտակներով ոտիկներ՝ 5–6 մմ բարձրությամբ:<br>Աշխատանքային հարթության վերևի աջ և ձախ անկյուններում նախատեսված են միջանցիկ անցքեր համակարգչային լարերի համար՝ փակվող խցաններով:<br>Գզրոցը՝ առանձին, 4 անիվի վրա շարժվող կոնստրուկցիա է, չափսերը՝ 410×460×690 մմ, 3 դարակներով, որոնց չափսերը համապատասխանաբար՝ 130–150, 130–150, 250–350 մմ (առավելագույն խորությամբ): Դարակների հետնապատը նույնպես ՓՏՍ-ի է: | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | Դարակները ունեն միասնական փական և բացվում փակվում են փափուկ և անաղմուկ ռնդիկավոր սահնակներով (ամերիկանկա)՝ առնվազն 35 մմ լայնությամբ: Դարակների բռնակները՝ օվալաձև կամ ուղիղ մետաղական, առնվազն 100 մմ երկարությամբ: Միացումներն իրականացվում են թաքնված պտուտակների և ձգանների միջոցով: | | |
| 6.2 | Աշխատանքային աթոռ: Աշխատանքային աթոռը նախատեսված է ուսուցչանոցի և բոլոր դասասենյակների համար: Աթոռի մետաղական կմախքը պետք է պատրաստված լինի մետաղական սնամեջ օվալաձև (30x15x2.0մմ), կամ կլոր (Ф 20x2մմ) խողովակներից, հնարավոր է նաև խողովակը լինի երկու կողմերից հավասարաչափ սեղմված և ունենա կլորացված ուղղանկյան ձև: Աթոռի մետաղական կմախքի զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ և փոշեններկված բարձրակարգ սև գույնի ներկանյութով: Նստելատեղի բարձրությունը հատակից 450մմ, թիկնակի բարձրությունը հատակից 850մմ: Նստելատեղի չափսերն են՝ 420x385մմ (առնվազն): Թիկնակը և նստելատեղը պատրաստված պետք է լինեն 8-10 մմ հաստության նրբատախտակից, որին ամրացվում է առնվազն 15-25 մմ հաստության և 20-30 կգ/մ3 խտության սպունգ: Թիկնակը և նստատեղը երեսպատված պետք է լինեն հաստ, որակյալ, ամուր, դժվարամաշ կտորով, գույնը համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Նստելատեղը և թիկնակը առանձին են իրարից: Թիկնակի վերևի հատվածում և մետաղական. և փայտային մասերը ունեն նույն տեսքը: Թիկնակի պաստառապատված մասի չափերը 400մմx300մմ: Ոտքերի եզրերը (ծայրերը) պետք է խցանված լինեն պլաստիկե սև գույնի խցաններով, որոնց կողային պատերի հաստությունը՝ 2մմ, տակի մասինը՝ 4-6մմ: | հատ | 2 |
| 6.3 | Գրապահարան: Գրապահարանը պատրաստված է լամինացված 18 մմ հաստությամբ ФSU-ից (բացառությամբ հետնապատի), գույնը համաձայնեցվում է պատվիրատուի հետ:<br>Արտաքին չափսեր՝ 820×410×2100 մմ (Լ×Խ×Բ),որից օգտագործվող հատված՝ 820×410×2000 մմ, ոտքի հատված՝ 820×410×100 մմ (դիմացից փակված ФSU-ով, ետնամասը բաց)<br>Կողային մասերը երկու կողմից 410×2100 մմ ФSU-ն ամբողջական, միացումները կատարվում թաքնված՝ պտուտակներով և մետաղական անկյունակներով:<br>Օգտագործվող հատվածը ունի 5 դարակաշար՝ բարձրությունը 400 մմ, վերևի 3 դարակները փակվում են թրծված սպիտակ թափանցիկ, թրծված 5–6 մմ հաստությամբ ապակե երկփեղկ դռներով, որոնցից յուրաքանչյուրը ամրացվում է՝ 3 ծխնիով: Ներքևի 2 դարակները փակվում են լամինացված 18 մմ ФSU-ից երկփեղկ դռներով, յուրաքանչյուրը 2 ծխնիով: Բոլոր դռները ունեն օվալաձև կամ ուղիղ մետաղական, առնվազն 100 մմ երկարությամբ մետաղական բռնակներ:<br>Դարակները նույպես պատրաստված լամինացված 18 մմ ФSU-ից, աշխատանքային հարթության եզրերը շրջափակված՝ 0.8–1 մմ հաստությամբ PVC-ով, ոչ աշխատանքային եզրագծերը՝ 0.4–1.0 մմ հաստությամբ PVC-ով, աշխատանքային հարթությունը անփայլ, բաց գույնի, դարակները պահող դետալները պետք է ունենան առնվազն 22 մմ երկարություն, 5 մմ տրամագիծ: Միացումները՝ թաքնված ամրակցումներով:<br>Հետնապատը 3 մմ հաստությամբ լամինացված փայտաթելային սալ (ԴՎՊ)՝ նույն ФSU-ի երանգին համադրելի, որը ամրացված է պինդ և առանց խուլթերի:<br>Ոտքերը 4 պլաստիկ բաց գույնի խցաններ՝ 5–6 մմ հաստությամբ, որոնք ապահովում են հատակից առնվազն 4–6 մմ բարձրություն: | հատ | 1 |
| | 7. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԽՄԲԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՀԼԻՃ | | |
| 7.1 | Մանկական աթոռ /5-6 տարիքային խմբի համար/: Գույները և չափերը՝ ՀՀ Առողջապահության նախարարի 12.02.2024թ. N 50-Ն հրամանին համապատասխան, մնացած չափսերը և արտաքին տեսքի լուծումները համաձայնեցնել Պատվիրատուի հետ: Պետք է պատրաստված լինի էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ հումքից, պետք է լինի լավ հղկված, ողորկ, առանց ծլեպների, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ նյութերով, անկյունները պետք է լինեն կլորացված: Պետք է լինեն ամուր՝ պատրաստված մաշակայուն նյութերից, ինչը շահագործման ընթացքում ի հայտ չգալու պարագայում վաճառողը պարտավորվելու է սեղմ ժամկետներում փոխարինել մատակարարված ապրանքը և/կամ կատարել համապատասխան վերազինում կամ ամրացում: Պետք է | հատ | 30 |

| | | | |
|---|---|---|---|
| | ապահովվի էսթետիկությունը, մասնավորապես՝ պետք է լինի հստակ գունավորմամբ, առանց արտադրական խոտանների, իսկ չգունավորված հատվածները երկու շերտով պատված բարձրորակ անգույն, էկոլոգիապես մաքուր և առողջության համար անվտանգ լաքով: Պետք է ապահովվի էրգոնոմիկությունը, այսինքն՝ մատակարարվող գույքը պետք է լինի համապատասխան հասակային խմբի չափսային պահանջներով, հարմարավետ՝ շահագործման ժամանակ: Հիմնական կոնստրուկտիվ տարրերը պետք է պատրաստված լինեն փայտից: Նստելատեղը պետք է պատրաստված լինի 9-10 մմ հաստությամբ նրբատախտակից, չափսերը՝ 340 x 310 մմ, մինչև նստելատեղը բարձրությունը հատակից՝ 310սմ: Նստելատեղից աթոռի հենակի բարձրությունը 280 մմ: Աթոռի հենակը պետք է պատրաստված լինի 9-10 մմ հաստությամբ նրբատախտակից: Աթոռի կոնստրուկցիան հավաքվում է շիպերով և պտուտակներով, նստատեղը ամրացված է պտուտակներով, եզրերը մշակված են, անկյունները կլորացված: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի լաքերի, ներկանյութերի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: | | |
| 7.2 | Դաhլիճի կարծրախեժե աթոռ: Աթոռի նստելատեղը և հենակը պետք է լինեն կարծրախեժից (պլաստամաս)՝ մեկ ամբողջական կտոր, նվազագույնը 4 մմ հաստությամբ: Աթոռի ոտքերը մետաղական, չճկվող, փոշեներկված: Ոտքերը պետք է ունենան պլաստիկե խցաններ: Աթոռները պետք է ունենան իրար միանալու դետալներ, ինչպես նաև իրար վրա պահեստավորվելու հնարավորություն: Բարձրությունը՝ 84 սմ, նստելատեղի բարձրությունը հատակից՝ 46 սմ, նստելատեղի լայնությունը՝ 40,5-50սմ, նստելատեղի խորությունը՝ 36-50սմ: Աթոռի թույլատրելի առավելագույն ծանրաբեռնվածությունը՝ առնվազն 150կգ: | հատ | 40 |
| | 8. ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԲՈՒԺԿԵՏ | | |
| 8.1 | Դաստիարակի սեղան - չափսերը՝ 1200x600x760մմ: Սեղանի աշխատանքային հարթության, կողապատերի (ոտքերի), հետնապատի և գզրոցի  համար  պետք է օգտագործվի լամինացված E0 դասի ՓՏՍ 18մմ հաստությամբ,  գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 1-2մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), ոչ աշխատանքային հարթության եզրերը պետք է շրջափակվեն 0.4մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC): Սեղանի առջևը փակվում է 18մմ հաստությամբ ՓՏՍ-ով (դիմապատը)՝ որի չափսերն են՝ 1164x600մմ, որը տեղադրվում է սեղանի աշխատանքային հարթության տակից, եզրին հավասար և ամրանում է աշխատանքային հարթության եզրին (տակից) և կողապատերի (ոտքերի) ներսի մասին: Կողապատերի (ոտքերի) լայնությունը՝ 570մմ: Կողապատերը աշխատանքային երեսին ամրացնելու համար երեսի տակից ամրացվում է լրացուցիչ 80-100 մմ լայնության լամինացված E0 դասի ՓՏՍ 18մմ: Կողապատերի (ոտքերի) եզրերը կշրջափակվեն 0.4-1մմ հաստության պլաստիկե եզրաժապավենով (PVC), իսկ հատակին հպվող հատվածի եզրերի վերջնամասերին պետք է պտուտակների միջոցով ամրացվի ոտիկներ՝ 5-6մմ բարձրությամբ: Սեղանի աշխատանքային հարթության վերևի աջ և ձախ եզրային անկյուններում համակարգչային տեխնիկայի լարերի համար պետք է տեղակայվի միջանցիկ անցքեր՝ տեղակայված փակվող խցաններով: Սեղանը կունենա առանձին, 4 անիվի վրա շարժվող գզրոց, չափսերը՝ 410x460x690մմ, երեք դարակներով համապատասխանաբար չափսերով՝ 130-150; 130-150; 250-350մմ, հնարավոր առավելագույն խորությամբ, միասնական փականով փակվող,  գզրոցի հետնապատը նույնպես պետք է լինի նույն ՓՏՍ-ից, դարակները բացվում և փակվում են փափուկ փակվող, անաղմուկ սահնակներով սայլասկա (գնդիկավոր տեսակի ամերիկանկա): Սեղանը,  կողապատերը (ոտքերը), դիմապատը, գզրոցը և պլաստիկե եզրաժապավենները պետք է լինեն նույն՝ ՓՏՍ-ի, բնափայտի երանգներով ոչ շատ մուգ գույնի: Դարակները պետք է ունենան օվալաձև կամ ուղիղ մետաղական բռնակներ, որոնց երկարությունը պետք է լինի առնվազն 100մմ: Միացումներն իրականացնել երաշխավորված և թաքնված ձգանների միջոցով: Սեղանի ոտքերին պտուտակներով պետք է ամրանան 4 պլաստիկե բաց գույնի խցաններ՝ 5-6մմ հաստությամբ,  որը կապահովի հատակից առնվազն 4-6 մմ բարձրություն: Պայմանագրի կատարման փուլում պետք է ներկայացվի լամինացված E0 դասի ՓՏՍ-ի, համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն): | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| | Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: | | |
| 8.2 | Աշխատանքային աթոռ - Աթոռի մետաղական կմախքը պետք է պատրաստված լինի մետաղական սնամեջ օվալաձև (30x15x2.0մմ), կամ կլոր (Ф 20x2մմ) խողովակներից, հնարավոր է նաև խողովակը լինի երկու կողմերից հավասարաչափ սեղմված և ունենա կլորացված ուղղանկյան ձև: Աթոռի մետաղական կմախքի զոդման կարանները պետք է լինեն մշակված, ողորկ: Մետաղական կոնստրուկցիան ամբողջությամբ նախապես պետք է յուղազերծվի, ապա ջերմային փոշեներկվի բարձրակարգ, էկոլոգիապես մաքուր և անվնաս  սև գույնի ներկանյութով: Նստելատեղի բարձրությունը հատակից 450մմ, թիկնակի բարձրությունը հատակից 850մմ:  Նստելատեղի չափսերն են՝ առնվազն 420x385մմ, թիկնակը և նստելատեղը պատրաստված լինեն 8-10 մմ հաստության նրբատախտակից, որին ամրացվում է առնվազն 15-25 մմ հաստության և 20-30 կգ/մ3 խտության սպունգ:  Թիկնակը և նստատեղը երեսպատված լինեն հաստ, որակյալ, ամուր, դժվարամաշ կտորով: Նստելատեղը և թիկնակը առանձին են իրարից: Թիկնակի վերևի հատվածում  և մետաղական և փայտային մասերը ունեն կիսաշրջանի, օվալաձև տեսք: Թիկնակի պաստառապատված մասի չափերն են 400մմx300մմ: Ոտքերի եզրերը(ծայրերը) պետք է խցանված լինեն պլաստիկե սև գույնի խցաններով, որոնց կողային պատերի հաստությունը՝ 2մմ, տակի մասինը՝ 4-6մմ: Պայմանագրի կատարման փուլում  պետք է ներկայացվի ներկանյութերի համապատասխանության, որակի հավաստագիր (սերտիֆիկատ) կամ համարժեք փաստաթուղթ (օրինակ՝ անկախ փորձագիտական հաստատության կողմից տրված եզրակացություն):  Ապրանքի վրա պետք է կատարվի հայերեն մակնշում, որում նշված կլինեն արտադրող երկիրը, արտադրող ընկերությունը, արտադրման ժամանակ օգտագործված նյութերը և այլ նշումներ: Մակնշումը պետք է կատարվի այնպիսի հատվածում, որպեսզի չխաթարի ընդհանուր էսթետիկ տեսքը: | հատ | 3 |

«ԷՔՍԻՏՕ» ՍՊԸ -ի տնօրեն՝   Ս.  Ստեփանյան   ____________________

Digitally signed by SUKIASYAN
SATINE 7705920282
Date: 2026.08.10 10:27:54 AMT